

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎԱՆՔԻՆ ՇՈՒՐՋԸ *)

(Հին ու նոր խնդիրներ)

Ս. Յակովբեանց հաստատութեան նիւթական կացութեան անցնելէ առաջ քիչ մը ծանրանանք Երուսաղէմի Պատրիարքական Աթոռին և Միաբանութեան ընդհանուր կազմակերպութեան մասին:

Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը իր իրաւասութեան տակ ունի վեց առաջնորդական վիճակներ.

1) Երուսաղէմ (Դնն եկեղեցի և ութ վանք).

2) Դամասկոս (Մէկ եկեղեցի).

3) Նաֆա (Մէկ եկեղեցի և մէկ վանք).

4) Պէյրութ (մէկ եկեղեցի).

5) Կիպրոս (Մէկ եկեղեցի և երկու վանք).

6) Լաթաքիա:

Նաև հետեւեալ հինգ տեսչութիւնները.—1) Ս. Յարութիւն, 2) Ս. Աստուածածին, 3) Ս. Հրեշտակապետ, 4) Բեթղեհեմ, և 5) Ռամլէ: Այս տեսչութիւնները զուտ վանական հաստատութիւններ են և իրենց իրաւասութեան ենթակայ ժողովուրդը չունին առաջնորդական վիճակներուն պէս:

Միաբանութիւնը՝ որուն գլուխը կը գտնուի օրուան Պատրիարքը, ըստ կանոնագրի պէտք է բաղկանայ հետեւեալ կարգերէն.

5 Եպիսկոպոս անդամներ.

40 Վարդապետներ.

12 Սարկաւազներ.

12 Դպիրներ.

30 Ժառանգաւոր աշակերտներ.

80 Բրձազգեստ եղբայրներ.

30 Մայրապետներ.

Գումար՝ 209 անդամ:

Միաբանութիւնը այս պահուս միմիայն երեք եպիսկոպոս անդամներ ունի—պատրիարքական փոխանորդ Գէորգեան

*) Տես «Մուրճ», № 1.

Ներսէս, Մարկոսեան Մամբրէ և Պոլսոյ փոխանորդ Երեցեան Գէորգ սրբազանները: Իր եպիսկոպոս անդամներէն մէկն ալ՝ Խապայեան Սահակ Սրբազան՝ ինչպէս յայտնի է, նախորդ տարի Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուցաւ, նախապէս ընտրուած Երեցեան Գէորգ Սրբազանի հրաժարմամբ:

Միաբանութեան անդամակցութեան պայմանները շատ խիստ չեն, ինչպէս կրնայ տեսնուիլ վանական Կանոնագրին հետեւեալ յօդուածներէն.

Յօդուած 2.—Սրբոց Յակովբեանց Միաբանութեան անդամ ընտրուելու փափաքող անձն պէտք է գրաւոր խնդիր մատուցանէ Տնօրէն ժողովոյն. իսկ ընդունուելու համար պայման է՝ 1) առողջ ըլլալ մարմնով. 2) 16-էն մինչև 18 տարեկան հասակաւ՝ եթէ ժառանգաւորաց վարժարանի աշակերտութեան կ'ուզէ մտնիլ ներկայացողը, 18-էն մինչև 40 տարեկան՝ եթէ Գրեգորեան կարգը ընդունուիլ կը փափաքի, և 30-էն մինչև 40՝ եթէ Մայրապետ է. 3) բարեբարոյ վկայեալ, և 4) Միաբանութեան մէջ ունէ գործով մը Ս. Աթոռոյ ծառայութիւն մատուցանելու կարող և պատրաստական ըլլալ:

Յօդ. 3.—Երկրորդ յօդուածոյ մէջ նշանակեալ հանգամանք մասնաւոր վկայագրով ստուգուելէն և բժշկական քննութեամբ հաստատուելէն ետքը՝ ընտրելիին վարջն ու բարքը և յաջողակութիւնը հասկցուելու համար Տնօրէն ժողովոյ կողմէն փորձոյ կ'ենթարկուի վեց ամիս:

Յօդ. 5.—Եթէ անդամակցութեան խնդրարկուն արդէն եկեղեցական դասէ է, առողջական և բարոյական և եկեղեցական վիճակը կանոնաւոր ըլլալն ստուգուելէ ետքը՝ երկու տարի ամբողջ փորձոյ կ'ենթարկուի, և ապա «Միաբանութեան կանոնաց հնազանդութեամբ Ս. Աթոռոյ հաւատարմաբար ծառայելու» խոստմնագիր առնելով ձեռքէն, կը վճուուի ընդունելութիւնն Տնօրէն ժողովով:

Գալով միաբաններու իրաւունքներուն, ահա թէ ինչ կը տրամադրէ միեւնոյն կանոնագրութեան 7-րդ յօդուածը.

Միաբանք իրաւունք ունին Ս. Աթոռէն ընդունիլ.—Ա. ընակարան, սնունդ, իսկ սարկաւազունք, դպիրք, ժառանգաւորք, քրճագեացք՝ նաև հագուստ, և իւրաքանչիւրն, ինչպէս նաև վարդապետք և եպիսկոպոսունք՝ իրենց անձնական մանր ծախքն հոգալու համար՝ Միաբանական անունով տարեկան մը, որ անձնիւր կարգի և աստիճանին յատուկ բաժանում ունի, և պաշտօնական տարեկան մը, որ իւրաքանչիւր պաշտօնի յատկացուած ըլլալով, կը տրուի պաշտօնակալաց: Բ. Հիւանդութեան ժամանակ դարման, և ծերութեան ժամանակ

խնամք, Գ. Ուսմիւնք և դաստիարակութիւն, անոնք՝ որ յարմարութիւն ունին, և ի մասնաւորի անոնք՝ որ եկեղեցականութեան կը պատրաստուին: Գ. Եկեղեցական Կարգ և Ս. Աստիճան՝ անոնք միայն որ արժանաւորութիւն և փափաք ունին, և որոց զանազան աստիճանի բարձրացումն՝ լուսարարապետի և դպրոցած տեսչի Տեղեկագրոց վրայ Տնօրէն ժողովով կ'որոշուի, բացի եպիսկոպոսական աստիճանի բարձրացումէն, որ Տնօրէն ժողովոյ առաջարկութեամբ միաբանական ընդհանուր ժողովով կ'որոշուի:

Միաբանութեան անդամներ՝ Ազգ. Կեդր. վարչութեան (Պոլսոյ) կարգադրութեամբ կրնան առաջնորդական և ուրիշ պաշտօններ վարել գաւառներու մէջ, բայց Պոլսոյ պատրիարքարանը այդ տեսակ կարգադրութիւն մը ընելէ առաջ պարտաւոր է նրուադէմի պատրիարքին հաւանութիւնը ստանալ:

Վաճխանեալ միաբաներու օրինաւոր ժառանգը Ս. Աթոռը ըլլալով, անոնց գոյքէն Ս. Աթոռոյ և ուրիշներու վերաբերող ու պատահապէս անոնց քովը գտնուող դրամ, անօթ, գիրք, դէնստ, և այլն, իրենց յատուկ տեղերը կը յանձնուին, և ինչ որ աւելնայ, Ս. Աթոռին կ'անցնի ի յիշատակ վախճանեալներու անուան: Միեւնոյնը կը գործադրուի նաև լուսարարապետին մահուան առթիւ, բայց մինչև անոր յաջորդին ընտրութիւնը, Տնօրէն ժողովը կնիքի տակ կը պահէ աւանդատան ընտրութիւնը, և նորընտիր լուսարարապետին ներկայութեան միայն կը կատարէ հարկ եղած գործողութիւնը: Իսկ պատրիարքին վախճանման պարագային, թէ՛ վախճանեալին և թէ՛ պատրիարքարանի գործերուն ընտրութիւն Միաբանութեան ընդհանուր ժողովէն ընտրուած քննիչ մասնախումբի մը գործակցութեամբ կը կատարուի:

Միաբանութիւնը ունի Տնօրէն ժողով մը որուն նախագահն է օրուան Պատրիարքը, և որուն անփոփոխ անդամ է, Պատրիարքին հետ, լուսարարապետ Սրբազանը: Անդամները թւով վեց են և կրնան պարբերաբար փոխուիլ: Արդի Տնօրէն ժողովը հինգ անգամ միայն ունի,—պատր. փոխանորդ Ներսէս Սրբազան, Մամբրէ Սրբազան, և Ազարեան Վահրամ (որ լուսարարապետ ընտրուեցաւ), ելամտից տեսուչ Մազուտեան Ղևոնդ և Յովհաննէսեան Նդիա վարդապետները: Վեցերորդ անդամն էր Փորթուգալեան Խորէն վարդապետ՝ որ անցեալ տարի վախճանեցաւ, և որուն յաջորդ մը չէ նշանակուած տակաւին: Վահրամ վարդապետ ալ լուսարարապետ ընտրուած ըլլալով, ուրեմն երկու նոր անդամի ընտրութեան հարկ պիտի ծագի: Տնօրէն ժողովոյ անդամները կ'ընտրէ Միաբանական ընդհա-

նուր ժողովը չորս տարուան պայմանաժամով: Անդամները կրնան վերընտրուիլ: Ժողովը՝ կանոնադրապէս շաբաթը երկու, և ի հարկին՝ աւելի նիստեր կրնայ ընել: Համարատու է Միաբանական ընդհանուր ժողովին:

Միաբանական ընդհ. ժողովին կրնան անդամակցիլ բոլոր հեղեցական անդամները, սարկաւազներն ալ մէջը ըլլալու պայմանաւ: Ժողովը համարատու է Ազգ. երեսփ. ժողովին, և ամէն տարի, մայիս ամսուն կը գումարուի՝ Տնօրէն ժողովին համարատուութիւնը ստանալու համար: Կրնայ գումարուիլ նաև պատահապէս, երբ Ս. Պատրիարքը, կամ Տնօրէն ժողովը, և կամ իր (Միաբան. ընդհ. ժողովին) Երուսաղէմ գտնուող անդամներուն մէկ երրորդը՝ պէտք տեսնեն: Երուսաղէմի մէջ գտնուող Միաբ. ընդհ. ժողովոյ անդամներուն կէսէն մէկ աւելին բաւական է օրինաւոր ատեան կազմելու և կարգադրութիւններ ընելու համար. բայց Պատրիարքի, Տեղակալի կամ Լուսարարապետի ընտրութեան ժամանակ հարկ է որ ժողովին ամբողջ անդամներուն կէսէն մէկ աւելին ներկայ ըլլայ:

Ապօրէն կերպով պաշտօնավարող Պատրիարք մը կրնայ ամբաստանութեան ենթարկուիլ կամ Միաբանութեան և կամ Կեդր. երեսփ. ժողովին կողմէ: Խնդիրը նախապէս կը քննուի Միաբ. ընդհ. ժողովոյ մէջ, ուրկէ վերջ կ'անցնի երեսփ. ժողովոյ օրագրին վրայ՝ վերջնական կարգադրութեան համար: Եթէ ամբաստանեալ Պատրիարքը Ս. Աթոռէն հեռանալու դատապարտուի, Միաբ. ընդհ. ժողովը Տեղակալութեան համար ընտրելեաց ցանկ կը պատրաստէ. ցանկը կը քննէ երեսփ. ժողովը և Տեղակալը ընտրելով անոր վաւերացման գիրը կը ստանայ Բ. Դռնէն: Անկէ վերջ՝ Տեղակալը կը վարէ պատրիարքական գործերը, մինչև որ հրաժարեցուցուած պատրիարքը կամ վախճանի և կամ ներման արժանանայ:

Պատրիարքական ընտրութեան ինչ կերպով կատարուիլը կը բացատրեն վանական կանոնագրին հետեւեալ յօդուածները.

Յօդուած 27.—Երբ պատրիարքի վախճանմամբ Առաքելական Աթոռը թափուր մնայ, պատրիարքական փոխանորդը Տնօրէն ժողովոյ խորհրդակցութեամբ Միաբան. ընդհ. ժողով գումարել փութալով ընտրել կու տայ՝

Ա.—Երեք անձերէ բաղկացեալ քննիչ մասնախումբ մը, որ պաշտօն ունի Տնօրէն ժողովոյ հետ պատրիարքի գոյքն և ընդհանրապէս պարիարքարանի մէջ գտնուած ամէն բան գրի առնուլ և ցուցակաւ Տնօրէն ժողովոյն յանձնելով՝ տեղեկագիր մատուցանել Միաբ. ընդ. ժողովոյ. իսկ Տնօրէն ժողովը, ի

հարկին բանալու արտոնութեամբ, Պատրիարքարանը կնքոյ տակ
կը պահէ մինչև ցգահակալութիւն նոր պատրիարքի:

Բ.—Պատրիարքական տեղակալը՝ որ քուէից բացարձակ
առաւելութեամբ կ'ընտրուի միանուն քուէով, որ իր ըն-
տըրութեան հաստատութեան պաշտօնագրոյն Կ. Պոլսէն գալէն
յետոյ կը վարէ իր պաշտօնը, ըստ 28-րդ յօդուածոյն:

Յօդ. 28.—Պատրիարքի վախճանման պատճառաւ ընտը-
րուած Տեղակալին պաշտօնն է Պատրիարքի ընտրական գործո-
ղութեանց նախագահել և մինչև ցգահակալութիւն նորընտրի
Պատրիարքի՝ անոր պաշտօնը վարել ըստ կանոնագրի Միաբա-
նութեան:

Յօդ. 29.—Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Պատրիար-
քը Ազգ. երեսփ. ժողովով կ'ընտրուի Միաբանութեան ներ-
կայած ընտրելեաց մէջէն, որոց ցուցակը կը պատրաստուի
հետեւեալ կերպիւ.

Նախ՝ Միաբ. ընդհ. ժողով կը գումարի՝ Միաբանու-
թեան ամբողջ եկեղեցական անդամոց կէսէն զէթ մէկ աւելին
ընդ նախագահութեամբ պատրիարքական Տեղակալի, որ կը
յիշեցնէ ժողովականաց պատրիարքական ընտրելիութեան ար-
ժանաւորութեան հանգամանքը և կը հրաւիրէ զնոսա խղճի-
մտօք կատարել իրենց ընտրութիւնը:

Իւրաքանչիւր ընտրող թղթի մը վրայ կը գրէ այն ամէն
Երիւքան եպիսկոպոսաց և վարդապետաց անունները, որք ե-
րեսունէինգ տարին լրացուցած և Օսմանեան Տէրութեան
հպատակ ըլլալով, ըստ իւր խղճի՝ կրօնական, բարոյական և
ուսումնական բարեմասնութեամբք արժանի են պատրիարքա-
կան զահը բարձրանալու:

Բուէհամար կը կատարուի սոյն քուէից, և առաւելագոյն
քուէ ստացող անուններէն՝ քուէից առաւելութեան կարգաւ
եօթն անձինք որոշուելով առաջին ցուցակ մը կը պատրաս-
տուի եօթնեքին ընտրելեաց:

Ժողովականք երկրորդ անգամ քուէարկութեան կը հրա-
ւիրուին՝ սոյն եօթնեքին ընտրելեաց ցուցակին մէջէն միայն
կրեք անձի վրայ քուէնին ամփոփելու պայմանաւ. և քուէհա-
մար կատարուելով երկրորդ ցուցակ մը կը պատրաստուի
երեքին ընտրելեաց՝ իւրաքանչիւրին ընդունած քուէին ա-
ռաւելութեան կարգաւ. իսկ եթէ երկու ընտրութեանց ժամա-
նակ հաւասար քուէներ պատահին՝ վիճակաւ կ'որոշուի ընտրե-
լին, և սոյն երեքին ընտրելեաց ցուցակն՝ իբր արժանաւորա-
գունից ընտրելեաց ցուցակ՝ հանդերձ եօթնեքին ընտրելեաց
ցուցակաւ, և իւրաքանչիւր ընտրելոյ բարեմասնութիւնքն և

արդիւնքն նկարագրող տեղեկագրով կը ներկայուի Ազգ. երեսփ. ընդհ. ժողովոյ, որ անոնց մէջէն կ'ընտրէ զպատրիարքն Ս. Երուսաղէմի, Կ. Պոլսոյ Պատրիարքի ընտրութեան տրամադրութեան համեմատ *):

Յօդ. 30.—Նորըտիւր պատրիարքը եթէ վարդապետ է, Միաբանական ընդհ. ժողովոյ վկայականով և Կ. Պոլսոյ պատրիարքի յանձնարարականով Ս. Էջմիածին կ'ուղևորի և եպիսկոպոսութեան աստիճան կը բարձրանայ. և վերադարձին՝ ի Կ. Պոլիս՝ յատենի Ազգ. (երեսփ.) ժողովոյ ուխտ ընելով «Հաւատարիմ մնալ Տէրութեան, Ազգին և Ս. Աթոռոյն Երուսաղէմի և հսկել անթերի գործադրութեան կանոնագրի միաբանութեան» և ընդունելով կայսերական հրովարտակ՝ կը դառնայ ի Ս. Երուսաղէմ և սովորական արարողութեամբ կը գահակալէ իր Աթոռն:

Իսկ եթէ եպիսկոպոս է, ընդունելով իր ընտրութեան և հաստատութեան պաշտօնագրերն՝ յատենի Սրբոց Յակովբեանց Տաճարին և ի ներկայութեան Միաբ. ընդհ. ժողովոյ հանդիսաւորապէս կը կատարէ վերոյիշեալ ուխտն և կը բազմի յԱթոռն պատրիարքական:

Ս. եկեղեցեաց մէջ պատրիարքի անուան յիշատակութիւնը կը սկսի իր ուխտի կատարումէն անմիջապէս յետոյ:

Միաբանութեան մասնաւոր պաշտօնեաներն են՝ լուսարարապետը, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդները, ելամտից տեսուչը, դարպասընկալը, դպրոցներու տեսուչը, դիւանապետը, Թարգմանները, վիճակային տեսուչները: Կան նաև՝ մատակարար մը, հանդերձապետ մը, բժիշկ և դե-

*) Ազգ. Սահմանադրութեան համեմատ, Պատրիարքը կ'ընտրուի զաղտնիքով երեսփ. ժողովին կողմէ: Եթէ առաջին քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէ ստացողներու անունները կը ծանուցուին, և երկրորդ ընտրութիւնը այդ երկու անուններուն վրայ կ'ըլլայ: Քուէները յատուկ քուէտուփի մը մէջ տրուելէն ետքը՝ քուէհամարը կ'ըլլայ ժողովոյ Դիւանին կողմէ և ժողովին անդամացող չորս եկեղեցական և չորս աշխարհական քննիչներու ներկայութեան: Եթէ պատահի որ երկրորդ անգամ ալ հաւասար քուէ գոյանայ, այն ատեն երկուքէն մէկը վիճակով կ'ընտրուի: Ընտրութիւնը կատարուելէն ետքը տեղեկագիր մը կը պատրաստուի զոր բոլոր ժողովականները կը ստորագրեն: Այդ տեղեկագիրը, Տեղապահին միջնորդութեամբ Բ. Դրան կը մատուցուի, և Պատրիարքը կը հաստատուի Պայս. հրամանին համեմատ: Պոլսոյ Պատրիարքը, իր պաշտօնին ձեռնարկելէ առաջ, Մայր եկեղեցւոյ մէջ, երեսփ. ժողովոյ ներկայութեան հանդիսաւոր ուխտ կ'ընէ հետեւեալ կերպիւ. «Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգ. ժողովոյ»՝ հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան, և ճշմարտապէս հսկել ազգ. Սահմանադրութեան գործադրութիւնը: Ո՛ր էր թէ ամէն պատրիարք զոնէ այս ուխտին հաւատարիմ մնար:

դադործ, գործակատարներ, գանձապետներ, այցելու տեսուչներ և նուիրակներ:

Այս պաշտօններուն մէջ ամենէն կարևորն է լուսարարապետինը: Լուսարարապետը պարտաւոր է անկորուստ պահել Ս. Աթոռին սեփական բոլոր անօթները, զարդերը, զգեստները, զրքերը և ուրիշ առարկաները: Իր հակողութեան ենթարկուած են Միաբանութեան բոլոր եկեղեցական անդամները և մասնաւորաբար ժամօրհնողները, խոստովանահայրերը, ժամասաց և ժամարար վարդապետները, սարկաւազները, դպիրները, մասագործները և ժամկոչները, նաև՝ լուսարարներն ու եկեղեցւոյ բոլոր սպասաւորները: Երուսաղէմի Աթոռը երկար ամիսներէ ի վեր առանց լուսարարապետի կը մնայ, այսինքն լուսարարապետ Սապայեան Սահակ Սրբազանի Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուելէն ի վեր: Ն. Ամենապատուութենէն վերջ՝ լուսարարապետ ընտրուեցաւ Գաբրիէլ վարդապետ Անոյշեան որ տակաւին հազիւ պաշտօնին ձեռնարկած՝ վախճանեցաւ: Իրմէ վերջ ընտրուեցաւ Տնօրէն ժողովոյ անդամ Ազարեան Վահրամ վարդապետ որ պաշտօնով Եգիպտոս կը գտնուի և տակաւին չէ ձեռնարկած իր նոր պաշտօնին:

Կարևոր պաշտօն մըն է նաև Պոլսոյ փոխանորդութեան պաշտօնը, զոր հիմայ արժանաւորապէս կը վարէ Երեցեան Գէորգ Սրբազան: Պոլսոյ փոխանորդին գլխաւոր դերն է միջնորդ ըլլալ Երուսաղէմի Աթոռին և կառավարութեան, ինչպէս նաև Ազգ. կեդրոնական վարչութեան միջև: Ինք է նաև Ս. Յակովբեանց վանքին Պոլսոյ և շրջականերու մէջ ունեցած կալուածներուն վերատեսուչը:

Դարձեալ կարևոր պաշտօն մըն է ելևստից տեսչի պաշտօնը՝ որուն վրայ պիտի խօսինք աւելի ետքը:

Ժառանգաւորաց վարժարանը ամէն տեղէ աշակերտ կ'ընդունի (16-18 տարեկան և առողջական վկայագրով), պայմանաւ որ աշակերտ արձանագրուողները կամ եկեղեցական կոչումն ընդունին և կամ, հակառակ պարագային, վարժարանին ընթացքը լրացնելէ վերջ երեք տարի ձրիաբար ծառայեն վանքին:

Ահաւասիկ վարժարանին ուսմանց ծրագրին հիմնական մասերը.

1) Լեզուագիտութիւն.—Հայերէն, ֆրանսերէն և թրքերէն:

2) Կրօնագիտութիւն:

3) Ուսողութիւն.—Թւաբանութիւն կատարեալ, գրահաշիւ (ալճհալրա) և երկրաչափութեան տարերք:

4) Պատմութիւն.—Սրբազան, եկեղեցական, ազգային և ընդհանուր:

5) Երգեցողութիւն.—Եկեղեցական և ազգային ձայնագրութեամբ:

6) Աշխարհագրութիւն:

7) Տիեզերագրութիւն:

8) Տարերք ընական պատմութեան եւ զիտութեանց:

Աշակերտները կը վարժուին նաև եկեղեցական պաշտամանց՝ կանոնաւոր դպրութիւն ընելով Եկեղեցւոյ մէջ:

Վանքը՝ քաղքին մէջ, իր շրջափակէն ոչ շատ հեռու, կը պահէ նաև երկու նախակրթարան, որոնց մէջ տեղացի 50—60 երկսեռ տղաք տարրական կրթութիւն մը կը ստանան:

Վանքին տպարանը, հիմայ, պարագաներու բերմունքով, կորսնցուցած է իր երբեմնի փայլը: Այդ տպարանէն՝ ասկէ առաջ բաւական թով գիրքեր հրատարակուած են, մեծ մասամբ պատմական-բանասիրական երկասիրութիւններ, ինչպէս նաև Սիօն հանդէսը որ մօտաւորապէս քառորդ դար առաջ գաղթած է՝ տաննահինգ տարիի չափ հրատարակուելէ վերջ: Այսօր, տպարանը Պոլսոյ Մէլարիֆիարտօնութիւնը կրող գիրքեր միայն կրնայ տպել: Ամէն տարի, կանոնաւորապէս կը հրատարակէ նաև վանքին սեփական փոքրագիր օրացոյցը:

Վանքը ունի նաև հարուստ թանգարան մը, ձեռագիր և տպուած գիրքերով ու թանգագիրն հնութիւններով լեցուն: Թանգարանը կը գտնուի յատուկ պաշտօնայի մը՝ թանգարանապետին հսկողութեան տակ, որ մասնաւոր արտօնութեամբ միայն կրնայ զայն բանալ օտարներու առջև:

Թերևս աւելորդ չըլլայ ըսել՝ թէ Միաբանութիւնը միշտ հոգածու եղած է և է՝ ուխտաւորներու հանգստութեան համար: Հաստատութեան հիւրանոցը կը բաղկանայ մօտաւորապէս 1000 սենեակներէ, որոնք կրնան 3000-է աւելի ուխտաւոր պարունակել: Այդ սենեակները միշտ կը նորոգուին:

Անցնենք վանքին նիւթական կացութեան: Աւելորդ է ըսել թէ իր բարոյական ազդեցութիւնն պահելու և աւելցնելու համար անհրաժեշտ է որ վանքը նիւթապէս շատ փայլուն վիճակ մը ունենայ: Արդէն Ս. Յակովբեանց հաստատութիւնը անտեսական ճգնաժամերու մէջ է որ ամէնէն աւելի պղտկացած է իր դիրքով: Որչափ փայլուն եղած է իր նիւթական կացութիւնը, այնչափ աւելի ամուր կռուաններ կըցած է գտնել իր իրաւունքներուն պաշտպանութեան համար: Եւ անձկու-

թեան, պարտքի տարիներու մէջ ալ, իր վարկը կորսնցնելով ստիպուած է տեղի տալ այն տեսակ հակառակորդներու առջև, որոնք եթէ ոչ իրենց իրաւունքով, գոնէ իրենց դրամով կրնան խօսքերնին քալեցնել:

Եւ եթէ հաստատութեան համար կայ դժբաղդ պարագայ մը, ան ալ սա է որ սկիզբէն ի վեր իր նիւթական կացութիւնը անսպասելի վիճակի մը մէջ յարատեւած է, իր եկամուտներուն անհաստատ հիմներու վրայ գտնուելուն պատճառաւ: Ուխտաւորութեանց, կամաւոր նուէրներու կամ կտակներու ենթադրական հասոյթներն են որ հաստատութեան ելնացոյցին մէջ մուտքի կողմը կը բռնեն մեծ մասամբ: Բայց որչափ ալ սեղմ հաշիւներ կատարուին այդ հասոյթներուն հաւանականութեան մասին, կրկին կը պատահին տարիներ՝ ուր նուէրէ, դարպասէ կամ կտակէ գոյացած դրամը նախատեսուածին մէկ պզտիկ մասն իսկ չի լեցնել: Եւ ահա ահադին բաց մը կը դոյնայ ելնուածին մէջ, բաց մը՝ զոր գոցելու համար հաստատութիւնը ոչ մէկ միջոց ունի: Եթէ երբեք եղած են ատեններ ուր վանքը հազարաւոր ոսկիներու պարտքի մը տակ հեծած է տարիներով, պատճառը այս պարագան է: Իրաւ է որ, շատ տարիներ առաջ, քիչ մըն ալ անհաշիւ տնտեսութեան և անփութութեան պատճառներ կրնանք գտնել, բայց վերջապէս պարտքերու գոյացման գլխաւոր պատճառը միշտ այդ անհաստատ եկամուտներուն նուազումը եղած է:

Առնենք հաստատութեան այս օրուան վիճակը: Հաստատութիւնը այսօր կլոր հաշուով տարեկան 7000 ոսկի կը ծախսէ:

Ահաւասիկ այս ծախքին մանրամասնութիւնը, միշտ կլոր հաշուով.

- 1000 ոսկի՝ եկեղեցիներու մատակարարութեան.
- 1000 » դպրոցներու և տպարանին.
- 1000 » ուխտաւորներու հանգստութեան, հիւրանոցի նորոգութեան, ուխտաւորներու ուտեստին կայլն:
- 2000 » Միաբանութեան սնունդին.
- 1000 » կալուածներու մատակարարութեան, տուրքին, նորոգութեան կայլն,
- 1000 » անաղնկալ ծախքերու, երթևեկութեանց կայլն.

Գումար՝ 7000 ոսկի:

Անցնենք հասոյթներուն և տեսնենք թէ ինչպէս կրնայ գոցուիլ այդ 7000 ոսկի տարեկան ծախքը.

3000 ոսկի՝ կալուածային հասոյթներէ.

2000	»	ուխտաւորական դարպասէ.
1000	»	արտաքին նուիրատուութիւններէ.
1000	»	անակնկալ հասոյթներէ (կտակ, նուէր կայլն):

Գումար՝ 7000 ոսկի:

Ինչպէս կը տեսնուի, ծախքերը անխուսափելի են և անհրաժեշտ, մինչդեռ հասոյթներէն եթէ բաժնելու ըլլանք կտուածներու բերած տարեկան 3000 ոսկիի եկամուտը, ուրիշ հաստատ բան մը չենք գտներ. անոնց մեծագոյն մասը, այսինքն 4000 ոսկի, ենթադրական է միշտ, և եթէ տարի մը ուխտաւորներ քիչ ըլլան ու նուէրները պակսին, մէկ հարուածով կրնայ 2—2500 ոսկիի պարտք մը գոյանալ, ինչ որ կործանաբար պարագայ մըն է անշուշտ նմանօրինակ ճեղք հաստատութեան համար:

Միաբանութեան արդի ելամտից տեսուչը, Մագսուտեան Ղևոնդ վարդապետ, այդ տնտեսական խախուտ դրութիւնը բարւոքելու և այդ անհաստատ կացութեան վերջ տալու կ'աշխատի երկար ատենէ ի վեր: Իր նպատակն է վանքին եկամուտներէն մեծագոյն մասը հաստատ հիմքի մը վրայ դնել, և կարելի եղածին չափ քիչ տեղ թողուլ անհաստատ եկամուտներու, որպէսզի այս վերջիններուն նուազութեան պարագային յաճախակի բացեր և հետեւաբար պարտքեր չգոյանան: Ղևոնդ վարդապետ այս նպատակին կը դիմէ տարիներէ ի վեր, անվընաստ, յամառ ու տոկուն գործունէութեամբ մը: Ծրագիր մը շինած է իրեն, և այդ ծրագրին գործադրութեանը կ'աշխատի, անկէ դուրս գտնուող ամէն բան, նոյնիսկ անձնական հանգըստութիւնը, իր առողջութեան պահանջները մոռցած:

Համակերելի ու մանաւանդ օրինակելի տիպար մըն է այդ վարդապետը, զոր կը մեղադրեն թէ շատ քիչ առիթներու մէջ միայն միտք կը բերէ եկեղեցւոյ պաշտօնեայ մը ըլլալը. կ'առարկեն թէ պատարագ չընէր, և թէ իր հաշիւներէն, իր ծրագիրներէն, իր տոմարներէն դուրս ամէն բանի հետ յարաբերութիւնը խզած՝ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ շատ քիչ անգամ միայն կ'երևայ: Կրնային տակաւին առարկել թէ Ղևոնդ վարդապետ վանականի ընդհանրապէս ծոյլ ու դանդաղ կեանքը անցնել չի սիրեր, թէ միակ իր քսակին և ստամոքսին վրայ չի մտածեր, թէ օրուան ամէնէն աննշան ըրպէն իսկ օգտակար աշխատութեան մը նուիրելու կերպը կը գտնէ, և թէ վերջապէս չուզեր վայելել այն բանը զոր հանգիստ կ'անուանին:

Այս վարդապետին յայտնութիւնը իսկապէս արտակարգ ու գրեթէ անօրինակ բան մըն է մեր վանական հաստատու-

թեանց մէջ: Մօտաւորապէս 30 տարիէ ի վեր կ'անդամակցի Ս. Յակովբեանց Միաբանութեան, և 20 տարիէ ի վեր հաստատութեան մէջ ճիշտ այն փրկարար դերը կը խաղայ, զոր երբեմն Քուպէն խաղացած է Ֆրանսայի մէջ, Լուի ԺԴ-ի գահակալութեան առաջին տարիներուն: Իր յայտնութեան ճշմարիտ պատճառը եղած է հանգուցեալ Ստեփան փաշա Ասլանեան, որ ութսունական թւականներու երուսաղէմի հաշւական խնդիրներուն առթիւ իբր ըննիչ-պատուիրակ գացած էր Ս. Յակովբեանց վանքը, և հոն առիթը ունեցած էր Ղևոնդ վարդապետի տարօրինակ կարողութիւնը գնահատելու: Այդ թւականներուն՝ Պոլիս՝ Երեսփոխանական ժողովին մէջ երկարատեւ վիճաբանութեանց առարկայ դարձած էր երուսաղէմի կլմտական կացութիւնը, զոր կանոնաւոր վիճակի մը մէջ պահելու համար կը մտածէին մնայուն պաշտօնով յատուկ ելեմըտից պաշտօնեայ մը ղրկել Ս. Յակովբեանց վանքը, դրամական և հաշւական գործառնութեանց հակողութեան մասին լիակատար իրաւունք տալով անոր: Այդ վիճաբանութեանց միջոցին է որ Ստեփան փաշա կը միջամտէ, և խորհրդարանին մէջ զբուռատելով Ղևոնդ վարդապետը՝ կ'առաջարկէ որ անոր յանձնուի ելեմտից տեսչի պաշտօնը: Երեսփ. ժողովը հաւանութիւն կը յայտնէ, և անկէ ի վեր (1880—81) Ղևոնդ վարդապետ կը վարէ այդ պաշտօնը, ձեռնհասութեամբ մը որ վեր է ամէն գովեստէ:

Հաշիւներու համար ծնած մարդ մըն է կ'ըսեն իրեն համար, ծանօթ՝ օրէնքին բոլոր տրամադրութիւններուն, և անըսեալ ելմտագէտ մը՝ որ մէնակը կը վարէ երուսաղէմի պատրիարքական Աթոռին պէս վեց առանձին առաջնորդական վիճակներ, հինգ տեսչութիւններ, տասը վանք և բազմաթիւ եկեղեցիներ ու կալուածներ ունեցող Աթոռի մը ըլլոր ելմտական գործառնութիւնները: Յետոյ, միշտ ինքն է միջնորդ կառավարութեան մօտ. և պետական պաշտօնատանց կամ ուրիշ քրիստոնեայ հաստատութեանց ու Ս. Յակովբեանց վանքին միջև ծագած բոլոր հաշւական և յարաբերական կնճիռները ինք կը հարթէ, գրեթէ միշտ ի նպաստ վանքին: Վանքին այս օրուան վարկը մեծ մասամբ իրմով գոյացած է, և այսօր կըրնայ նոյնիսկ առասպելական գումարներու փոխառութիւն մը ընել, առանց դժուարութեան:

Մեք լապտերով կը փնտրենք ասանկ պաշտօնեաներ, և չունենալնու համար է որ այսչափ երկարօրէն կը ծանրանանք Ղևոնդ վարդապետի մասին: Բայց թրքահայոց մէջ այդ կարգի պաշտօնեաներ երբէք չեն կրցած իրենց գործունէութիւնը ա-

ուշ տանել՝ առանց աղտոտ ու գձուձ նախատինքներու և դիմադրութեանց հանդիպելու։ Որովհետև եկեղեցի չերթար, պատարագ չըներ, ծոնկերը չի մաշեցնէր Ս. Յարութեան տաճարին մարմարներուն վրայ, շարունակ կը խծբծեն զինքը, առանց բնաւ մտածելու թէ Ս. Յակովբեանց վանքը եթէ երբէք ժամանակ մը քանի մը տաանեակ հազարաւոր ոսկիներու պարտքի մը տակ ընկճուեցաւ՝ պատճառը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ աղօթող, պատարագ ընող, ծոմ բռնող և հաշիւէ, օրէնքէ, տոմարէ չհասկցող միաբաններ միայն ունենալը։ Չեն մտածեր տակաւին թէ մէնակը տասը հոգիի գործ տեսնող վարդապետ մը ինչպէս ժամանակ կրնայ գտնել ամէն օր եկեղեցի երթալու, պատարագ ընելու։ Իրենց ըրած աղօթքէն ձվ խեր տեսեր է արդէն։ Թող այդ մէկուն ալ պատարագը պակաս ըլլայ, թող այդ մէկն ալ հաշիւներով զբաղի, քանի որ այդ հաշիւներուն կանոնաւորութեան շնորհիւ միայն վանքին գոյութիւնը կրնայ փրկուիլ։

Այս վերջերս պայքար մըն ալ իրեն դէմ մղուեցաւ, կարգ մը առարկութիւններով՝ որոնք շուտ ցրուեցան և տեղի տուն որ Տ. Յարութիւն Պատրիարքի պէս գովեստի մասին բացարձակապէս ժլատ եղող եկեղեցական մը, Ազգ. կեդր. վարչութեան ուղղուած նամակով մը ինք անձամբ ձեռք առնէ Ղևոնդ վարդապետի պաշտպանութիւնը։ Թրքական թերթեր արտատպեցին այդ նամակը, մենք ալ հոս կ'արտագրենք քանի մը մասեր *).

«Մենք երկար տարիներէ ի վեր ակնատես և վերին հսկող լինելով նորա (Ղևոնդ վարդապետի) աշխատութեանց, լիովին դնահատած եմք նորա անձնութիւնին ու աշխատութիւններն՝ որք այնքան նիւթական և բարոյական թանգազին արդիւնքներ յառաջ բերած են ու կը բերեն յօգուտ Ս. Աթոռոյս և Ազգին»։

«... Արդէն ամէնուս յայտնի է թէ Ս. Աթոռս մասնաւոր վանքերու և հաստատութիւններու չնմանիր. իր վարչական մեքենան բազմաբարդ է, ներքին միաբանական զանազան խնդիրներէ զատ ունի իր վարչական, յարաբերական, ելմտական, տնտեսական, կալուածական, ուսումնական, դրական, դատական և Ս. Տեղեաց անհատնում խնդիրներ ու պէտքերը,

*) Այս նամակը հետաքրքրական է անոր համար մանաւանդ որ նրուադէմի Պատրիարքը, ինքնին շատ բծախնդիր ու բողոքապահանջ, գրեթէ ուրիշ ոչ մէկ առթի մէջ այս աստիճան հանդիսաւոր կերպով մը գոված է իր մէկ պաշտօնեան։

ինչպէս նաև իր զանազան ճիւղերը, վանքերը և հաստատութիւնները որք ամէնն ալ կախում ունին Ս. Աթոռոյս Կեդր. վարչութիւնէն, ուր այնքան մեծ պէտք կայ գործօն, փորձառու, հեռատես, համբերատար և անձնուէր ոյժերու: Ուստի երբէք չենք կրնար ներել որ Մեր և Տնօրէն ժողովոյ յանձնարարութեամբ և միաբանութեան խնդրանօք այս ամէնուն ըստ կարի հասնելու համար Տ. Ղեռնդ վարդապետի պէս անձնուիրաբար աշխատող միաբան մը՝ յետ այնքան երկարատև և արդիւնաւոր ծառայութեան՝ նախատուի, արժանապատուութիւնը վիրաւորուի կայլն:

«... Իր արժանիքն, ուղղութիւնը և կարողութիւնը ամենուկտ, նոյնիսկ մրցակից վանքերէն և հաստատութիւններէն անգամ, ինչպէս նաև Պետութիւնէն և պետական մեծ և փոքր պաշտօնատարներէն ճանչցուած և գնահատուած ըլլալով՝ պատիւ բերած է Միաբանութեան և Ազգին: Իսկ Մեզ համար՝ մասնաւորապէս մեր պատրիարքութիւնէն առաջ և մասնաւոր մեր պատրիարքական շրջանին մէջ միշտ զօրավիգն ու մխիթարութիւնն եղած է իր անձնուիրութեամբ և յամառ աշխատութեամբ: Յաւօք սրտի կը յաւելումք թէ տակաւին չեմք կրցած իրեն հետ վարձատրութիւն մը ընել ոչ նիւթապէս և ոչ բարոյապէս» *):

Վանքին եկամուտները հաստատ հիմի մը վրայ դնելու, և ելմտացոյցին հաւասարակշռութիւնն ապահովելու համար, Ղեռնդ վարդապետի ընտրած գլխաւոր միջոցն է կալուածներու յաւելումը: Տեսանք արդէն որ հաստատութեան ելմտացոյցին մուտքի կողմը, միակ հաստատուն եկամուտները կը կազմեն կալուածական հասոյթները: Ղեռնդ վարդապետ կը միտի կալուածներու թիւը հասցնել այն տեսակ համեմատութեան մը՝ որոն շնորհիւ կարելի ըլլայ միմիայն անոնց եկամուտով ծախքերու ամենամեծ մասը գոցել:

Ասիկա դիւրին գործ չէ անշուշտ, և այդ աստիճան մեծ հասոյթ բերելու սահմանուած կալուածներ մէկ օրէն միւսը չեն կրնար կանգնուիլ: Բայց կ'երևայ թէ Ղեռնդ վ. իր բառարանին մէջէն սրբած է «դժուար» բառը: Աննկուն յարատեւութեամբ մը կ'աշխատի, սիրահարուած իր գործին՝ որուն յաջողութիւնը վանքին նիւթական փրկութեան խնդրին մէջ ամենամեծ դեր պիտի խաղայ: Իր գործունէութեան գլխաւոր եղանակն հետեւեալն է.— փոխառութիւններ ընելով կալուածներ կառուցանել

*) Թաղերը կը կրէ 20 սեպտեմբեր 1903 թականը և 101 թահա-մարը:

(պանդոկ, խան, բնակարան, խանութ և այլն), փոխ առնուած գումարն ու տոկոսներն՝ այդ միեւնոյն կալուածներու հասոյթով հատուցանելու պայմանաւ, որով կալուածներու յաւելման գործը որեւէ կերպով բեռ չըլլար վանքին վրայ: Տարիներ վերջ վանքը տէր պիտի դառնայ ահագին թւով կալուածներուն՝ որոնց մեծագոյն մասին համար գրեթէ ոչինչ ծախսած է:

Առնդ վարդապետ արդէն իսկ այս կերպով բաւական գործ տեսած է. միմիայն իր պաշտօնավարութեան շրջանին 40—50,000 ոսկիի արժողութեամբ կալուած կառուցած է, բայց, ինչպէս ըսինք, այդ կալուածները առ այժմ մեծ բան մը չեն բերեր վանքին՝ քանի որ վանքը, շինութեան ծախքերուն հատուցուելէն վերջը միայն պիտի կրնայ տիրանալ անոնց ամբողջական եկամուտներուն *):

Առնդ վարդապետ անշուշտ պիտի շարունակէ այս կերպով աշխատիլ: Բայց որչափ ալ մեծ ըլլան իր ջանքերն ու կարողութիւնը, տակաւին շատ երկար տարիներու պէտք պիտի ունենայ իր նպատակին հասնելու և Ս. Յակովբեանց հաստատութեան ելմտական կացութիւնը միանգամ ընդմիշտ ապահովելու համար: Եւ պէտք չկայ ըսելու թէ այդ երկար տարիներու ընթացքին՝ վանքը՝ ակնկալու աչքերով միշտ պիտի շարունակէ Ազգին նայել, ինչպէս հիմայ, իր բովանդակ յոյսը դրած ուխտաւորներու դարպասին և բարերարներու նուէրներուն ու կտակներուն վրայ:

Իր գոյութիւնը Ս. Տեղեաց մէջ, առայժմ թերեւ ամէնէն անհրաժեշտ միջոցն է մեր Ազգ. Եկեղեցւոյն նշանակութիւնն ու դիրքը բարձր պահելու համար: Ազգին կը մնայ հասկնալ այս էական պարագան, և չմոռնալ բնաւ այդ ընդարձակ ու բազմակարօտ հաստատութիւնը՝ որուն կապուած է արդէն դարերու փառաւոր յիշատակներով:

ԳԱՂԹԱԿԱՆ

*) Այդ կալուածներուն մէջ կը գտնուին նաև Միաբնակեան անդամներու անձնական դրամով կառուցուածները: Որչափ առեն որ ողջ են, միաբնակները կրնան զանձել իրենց սեփական կալուածներու եկամուտները: Իրենց վաթճանելէն վերջն է որ այդ կալուածները վանքին կը մնան, ինչպէս կը տրամադրէ արդէն վանական կանոնադրին 8-րդ յօդուածին հետեւեալ հատուածը. — «Միաբնակ ազատ են իրենց անձնական դրամով, իրենց անձին յատուկ կալուած դնելու կամ շինելու, պայմանաւ որ սեփականութիւնը Ս. Եկեղեցւոյն ընծային պաշտօնական կտակազրով (Վագֆիյէ) և միայն վարձքը կամ արդիւնքը վաճիկն իրենք՝ ըստ պայմանաց կտակազրոյն»: